

կամաւք եւ ընտրութեամբ աստ ժողովեալ վարդապետաց, եպիսկոպոսաց եւ քահանայից եւ ժողովրդոց, մեծի եւ փոքու, եկաց եւ ընակաց: Ձեռնադրեցի աւրհնութեամբ, մեծաւ հանդիսիւ եւ զերապայժառ տաւնախմբութեամբ գտէր Գրիգոր հայրապետն արքեպիսկոպոս սուրբ քաղաքիս յԵրուսաղէմոյ, ի սուրբ առաքելական յԱթոռս Եղբաւր Տեառն արդարոյն Յակոբայ որդւոյն Ձեբեթիայ, եղբաւրն Յովհաննու աւետարանչին, աւգնականութեամբ եւ ձեռնտուութեամբ տէր Դաւիթ արքեպիսկոպոսին սուրբ Աթոռոյս Երուսաղէմոյ: Կամաւք եւ վկայութեամբ բազմահոյլ վարդապետացն, եպիսկոպոսաց եւ քահանայից եւ ժողովրդոց. Ջուղայոյ Մեսրոպ եպիսկոպոսի, խոջայ Ոսկանին, խոջայ Մարութին, խոջայ Բարաքին, խոջայ Մարտիրոսին, խոջայ Բարաքին, խոջայ Կարապետին, խոջայ Սարուխանին, խոջայ յԵսայուն, խոջայ Մարգարին, Մկրտիչ Էրիցին, Պետրոս Էրիցին եւ Մարտիրոս վարդապետին, խոջայ Խըլղատին, Բաղդասարին, Վարդանիսին Վանայ քաղաքին վկայութիւնովն. Կարապետ վարդապետի Բաղիչոյ առաջնորդին, մահդասի Աւաք(ի)ն եւ Իւրեանց դաւրվաթաւորաց վաքելութենովն. Արզրումայ խոջայ Անդրէասին վկայութենովն, Սարբերդցի Յովհաննէսին վկայութենովն. Երզնկայու Փերիխանին վկայութենովն. Համթեցի վարդապետ Ստեփանոս Էրիցուն եւ Երեսփոխանաց եւ այլ դօւրվաթավորաց վկայութենովն. Հալպայ խոջայ Պետ-